



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի  
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. (+374281) 2 25 22

«\_\_\_\_\_» «\_\_\_\_\_» 2024թ.

N \_\_\_\_\_

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Գ. ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սանոսյան

Ի կատարումն Ձեր 29.03.2024թ. թիվ ԳՍ/15.3/10233-2024 հանձնարարականի՝  
ներկայացնում ենք պահանջվող տեղեկատվությունը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

2024-04-02 17:35:17 GMT+4  
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից



Հարգանքով՝

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Կատարող՝ Գ. Հարությունյան  
Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների  
կառավարման վարչության գլխավոր մասնագետ  
Հեռ: +374 281 2 55 04, +374 77 13 97 37

**«Ալիք Մեդիա»-ի լրագրող Հասմիկ Բալեյանից  
տեղեկություն ստանալու հարցում**

1. ՀՀ-ում ինչպե՞ս են գոյանում *խմելու ջրի* ջրային ռեսուրսները:
2. Վերջին տարիներին ՀՀ ո՞ր մարզերում է գրանցվել խմելու ջրի սակավություն: Պետությունն ի՞նչ ջանքեր է գործադրում այս խնդրի լուծման համար:
3. Վերջին երեք տարվա ընթացքում խմելու ջուր ամբարելու նպատակով քանի՞ ջրամբար է կառուցվել ՀՀ-ում: Ի՞նչ խնդիրներ են լուծվել այդ ջրամբարների կառուցմամբ:  
**Պատասխան՝ ՀՀ Վայոց ձորի մարզում վերջին երեք տարվա ընթացքում խմելու ջուր ամբարելու նպատակով ջրամբար չի կառուցվել:**
4. Այդո՞ք ՀՀ-ում որոշակի պատճառներով կարող է առաջանալ խմելու ջրի կորուստ:
5. Արդյո՞ք վերջին տարիների ընթացքում հանրապետությունում փոխվել են խմելու ջրի ջրամատակարարման մաշված համակարգերը: Այդ համակարգերի համար ո՞ր կառույցըն է վճարել . պետությունը, թե՞ «Վեոլիա ջուր» ընկերությունը:  
**Պատասխան՝ ՀՀ Վայոց ձորի մարզում խմելու ջրի ջրամատակարարման մաշված համակարգերը փոխվում են պետական միջոցներով, մասնակի «Վեոլիա ջուր» ընկերություն կողմից:**
6. Հայաստանում կա՞ն բնակավայրեր, որտեղ խմելու ջուր չկա և բնակիչները հարևան բնակավայրերից են խմելու ջուր տանում: Եթե կան այդպիսի բնակավայրեր, խնդրում եմ նշել դրանք:  
**Պատասխան՝ ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերը ապահոված են խմելու ջրով:**
7. Խմելու ջրի հետ կապված խնդիրները լուծելու համար Հայաստանը միջազգային կառույցների հետ համագործակցո՞ւմ է: Եթե այո, ապա խնդրում եմ նշել այդ համագործակցություններից մի քանիսը: Ի՞նչ խնդիրներ են լուծվել այդ համագործակցությունների շնորհիվ: Արդյո՞ք ֆինանսական աջակցություն էլ է տրամադրվել:
8. Հայաստանում կա՞ն դպրոցներ և այլ կրթական հաստատություններ, որտեղ խմելու ջուր չկա, ուստի նաև սանիտարահիգիենիկ խնդիրներ են առաջանում:  
**Պատասխան՝ ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցները և այլ կրթական հաստատությունները ապահոված են խմելու ջրով:**
9. Հայաստանում խմելու ջրի հետ կապված՝ սպասարկման ծառայությունները «Վեոլիա ջուր» ընկերությունից բացի՝ ո՞ր ընկերություններն են մատուցում:  
**Պատասխան՝ ՀՀ Վայոց ձորի մարզում «Վեոլիա ջուր» ընկերությունից բացի որոշ բնակավայրերում խմելու ջրի հետ կապված սպասարկման ծառայությունները իրականացնում են համայնքները:**
10. Մարզերում և մայրաքաղաքում խմելու ջրի սակագինն արդյո՞ք նույնն է: Խնդրում եմ նշել, թե Երևանում և մարզերում որքան է խմելու ջրի սակագինը:
11. Արդյո՞ք խմելու ջրի որակը, անվտանգությունը ստուգվում է պետական մարմինների կողմից: Խմելու ջրի ակունքները մասնագետները ի՞նչ հաճախությամբ են հետազոտում: